



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը


You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

4584

Присяжных Юрий
Присяжных Юрий



1910

19 AUG 2011

ՀՅՈՒԽԻՆ ԿԱՌԱՎԱՐ. ԳՐԱՎ. ԶԱՐ. ԳՐԻԳՈՐԵԱՆՑԻ

ՎՐԱՍՏԱՆԻ ՄԻԱՆԱԼԸ

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՀԵՏ



Ուստաց աղբիւրից ժողովեց և
թարգմանեց Զաք. Գրիգորեանձը

1910
Եւեկարուսաբան և Ա. Դ. Ժ. Գ. Ա.
Թ. Ի. Ֆ. Լ. Բ. Զ.

(47.922
7-95

947.922

Գ-95

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ՊՎԿ. ԳՐԱԿԱՆ. ԶԱՔ. ԳՐԻԳՈՐԵԱՆՑԻ

24 JAN 2006
ELOS ER

ՀՈՅ
ԱՄ.

ՎՐԱՏԱՆԻ ՄԻԱՆԱԼԸ

ՈՒԽԱՍՏԱՆԻ ՀԵՏ

1004
1004



Ոռւսաց աղբիւրից ժողովեց և
թարգմանեց Զաք. ԳՐԻԳՈՐԵԱՆՑԻ



1910

Էլեկտրոսպարան և Ա. Դ. Ժ. Դ. Ա.
Թ. Ի. Ֆ. Լ. Ի. Զ.

2203. 2013
45

7589

ՎՐԱՍՏԱՆԻ ՄԻԱՆԱԼԸ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՀԵՏ:

Վրաց թագաւոր իրակլու մտհը և սորա որդի Գիօրգու թագաւորութեան սկիզբը:—Վրաստանի զրութիւնը իրակլի Ա-ի մահուան ժամանակ:—Վրաստանի օգնութիւն խնդրելը Ռուսիայից:—Գեներալ-մայօր Լաղարեի-Եգերեան պոլկի թիֆլիս մտնելը (20 նոյեմբերի 1799 թւին): Պարսկաստանի նոր սպառնալիքների պատճառով Վրաստանի-Ռուսաստանին հպատակութիւն ընդունելը (12 դեկտ. 1799 թւին):—Գեներալ-մայօր Գուշակովի պոլկի Անդր-Կովկաս գալլ: Եօրեայ զետի մօտ եղած պատերազմը ւհանականների հետ (7-ն նոյեմբ 1800 թւին):

Վրաստանը դանւում էր Պարսից նահերի իշխանութեան ներքոյ մինչև պարսկաստանի Սօֆիի (Սեֆեվիների) պետութեան տոհմի ջնջուելը: Պարսկաստանի Տէր-նահապետը իրաւունք ունէր վրաստանի վերայ թագաւոր կարգել ըստ իր կամեցողութեան Բաղրատիօն ցեղից՝ ումը և կամենարք Վրաց թագաւորը և իշխանները ամեն տարի նահից ստանում էին վայելուչ սոճիկներ, ունենում էին նոքա Պարսկաստանում նուիրուած կալուածներ, որոնցից ստահալիք եկամուաները ամեն տարի ուղարկում էր Վրաստան և բացի գըանից՝ իւրաքանչիւր տարի վրաց թագաւորը և նշանաւոր իշխանները նահից ստանում էին նուերներ: Դորա փոխարէն վրաց թագաւորը ուղարտաւոր էր՝ եօթը տարին մի անգամ բաժը պատանի և եօթը

աղջկերք տալ: Իսկ Վրաստանը դրացի ժողովուրդների խուժելուց.—պաշտպաննելու համար թիֆլիզի բերդում պարսից գորքեր էին պահում:

Պարսից Սիփելիների՝ վերջին Շահներն էին՝ Շահ-Մուլթան Յուսէինը և նորա որդի Թամազ:

Շահ-Մուլթան Յուսէինի թոյլ կառաւարութիւնն էր պատճառ, որ ամէն կողմից Պարսից թշնամիները յարձակուեցին պարսկաստանի վերայ և նորա քաղաքները և ամբողջ նահանգները իւրացրին: Այսպէս՝ 1) Աւղանները արշաւեցին Պարսկաստանի վերայ և նորա քաղաքները՝ Խալահան մայրաքաղաքը խլեցին և իրան Շահին գահնկեց արին: 2) Ռուսաց մեծն Պետրոս թագաւորի ժամանակն էր, որ Ռուսաստունը, Պարսկաստանից խլեց՝ Դերբէնդը, Բաքուն, Գիշանը, Մազանդարանը և Աստրավալը: 3) Տաճիկ կառավարութիւնը Պարսկաստանից խլեց՝ Աստրավալիանը, Նախիջևանը, Երևանը, Թիֆլիզը, Գանձակը և այլն: Ահա հէնց այդ ժամանակներումն էր, այն է 18 դարի սկզբներում, երբ Սեֆելիների թուլացած ժամանակ, որ տաճիկները Վրաստանից պարսիկներին դուրս արին և նոր կարգեր մտցրին այն տեղ, որով ձգտում էին Վրաստանը մահմետացնել:

Երբ Նազիրը-Շահ դարձաւ, սա էլ Վրաստանից տաճիկներին խրկելով—նորից վերականգնեց Վրաստանի կախումը պարսկաստանից և նշանակեց այն տեղ Ալէքսանդր Բագրատիօնին: Սրա մահից յետոյ Քարթալինիէն տուեց Ալէքսանդրի հօր Եղբայր Թէիմուրազին: Կախէթն էլ տուեց Իրակլուն, որ այդ Թէյմուրազի որդին էր: Հետևապէս՝ հայրը թագաւորում էր Քարթալինիայումն: Իսկ որդին Կախէթումն Թէյմուրազի մահից յետոյ Իրակլին դարձաւ թէ Քարթալինիայի և թէ Կախէթի թագաւոր: Իրակլի Ալ թագաւորը:

տեսնելով որ Նազիր Շահի սպանելուց յետոյ խառնաշփաթութիւններ է տիրում Պարսկաստանում, օդառուեց դրանից և իրան աղաւ համարեց Շահերի իշխանութիւնից:

Երբ Պարսկաստանում՝ Նազիր-Շահից յետոյ—Աղա-Մահմադ-խանը թագաւոր գարձաւ, նա ցանկացաւ նորից տիրապետել Վրաստանին: Իսկ Իրակլի Ալ թագաւորը այդ գիտենալով բազմիցս դիմումներ էր անում Եկատերինէ թագուհուն օգնութիւն հասցնելու իրան Աղա-Մահմադ-խանի դէմ պաշտամանուելու համար: Բայց այդ օգնութիւնը ինչ-ինչ պատճաներով ուշացաւ: Մահմադ-խանն էլ տեսնելով որ Իրակլի թագաւորը յամառում է իրան հպատակուելուց և խոնարհուելուց, շատ մեծ քանակ զօրքերով (70,000 զորքով) արշաւեց դէպի Վրաստան և 1795 թւին սեպտեմբերի 12-ին յարձակուեցաւ Տիկիսիի և շրջակայքի վերայ և բոլորովին աւերակ դարձրեց բոլորը և այլեց ամբողջ քաղաքը:



Վրաց Իրակլի Ալ
թագաւոր:



Իրակլի Ալ ամուսին
Քարթալի (Կարենին) թագուհին:

Այդ անցքից մօտ երեք տարի անցնելուց յետոյ, այն է՝ 1798 թվին յունուարի 11-ին Թէլաւ քաղաքում, որը Կախեթի մայրաքաղաքն էր, վախճանուեց իրակլի Ա թագաւորը՝ իրակլի Ա-ընուել էր 1716 թվին, ուրեմն նա վախճանուել էր 82 տարեկան հասակում. իսկ թագաւորել էր 52 տարի, այսինքն՝ 1746-ից սկսած մինչև 1798 թիւը եւ քանի որ իրակլու մահուան տարին՝ Վրաստանումը գեռ ժանտախտ ցաւը (պահանջանակ) կար, այդ պատճառով էլ թագաւորի մարմինը 40 օր պահուեց Թէլաւի Սբ. փրկիչ եկեղեցում և միայն փետրուարի 10-ին սկսեցին յուղարկաւորութիւնը կատարել դէպի Մցխէթ քաղաքի մայր եկեղեցին, որի մէջ ամփոփուում էին վրաց թագաւորների մարմինները:

Ժանտախտ ցաւն էլ յառաջացել էր նրանից, որ, ինչպէս ասացինք, Աղա-Մահմադ խանը բազմաթիւ զօրքերով արձակուել էր Տփխիս քաղաքի և շրջակայքերի վրայ ու բացի բազմաթիւ ժողովուրդ կոտորելուց և քար ու քանդ էր արել ու միանգամայն աւերակ դարձրել ամբողջ քաղաքի թէ աները և թէ եկեղեցիները. Միայն երկու շէնք էր թողել առանց ձեռը տալու. Այդ շէնքերից մինը՝ տուն էր, միւսը բաղանիք՝ Այդ երկու շէնքերն էլ պէտք է որ իրան պէտքը գային, որոնցից իրաւ, մէկը, այն է տունը, պէտքն եկաւ. իսկ բաղանիքը չը կարողացաւ Աղա-Մահմադ խանի բաղանիքը լրացնել և յուսացածը կատարել,

Շէնքերից մինը՝ Բեհրութիւնց իշխան Մելիքի այն տունն էր, որը գտնուում էր այժմեան Մարիամեան—Յովեանեան հայ օրիորդաց, — (աս էլ Բեհրութիւնց պատկանած աներիցն է) գպրանոցին կից և այն էլ ոչ թէ փողոցի վերայ նորերու շինած շէնքն էր, այլ այդ շէնքի ետեի—դէպի Սօլոլակ սարի ստորոտում շինած հին տունը. Աղա-Մահմադ խանը Բեհրութիւնց այդ տնից ամէն օր գնուում էր «Պարնենց» կոչուած կամ իրակլ ու բաղանիքը լողանալու. իսկ երեկոները գնուում էր Սողանլուխ, որտեղ գտնուում էր իր զիմանալու

զորաբանակը,—այն տեղ գիշերելու. միւս օրը դարձեալ Բեհրութիւնց տուն։ Աղա-Մահմադ խանը քանի որ Տփխիս սումն էր, իսկ նա Տփխիսումն մնաց 7-ը օր. և այդքան օր էլ նա գնուում էր վերոյիշեալ բաղանիքը, Խանը երկնչում էր քաղաքումը գիշերելու, որ յանկարծ յարձակում չը գործեն իրեն վերայ և այդ պատճառով ամեն երեկոյ գնուում էր Սօղանլուխ իրան համար առանձին և առանձնացած պատրաստած տեղը գիշերելու ամբողջ բանակի մէջ։

Նադիր-Շահի հրամանով Աղա-Մահմադ խանը ներքինացած էր, Տփխիսի բաղանիքները տաք լինելով նա կարծում էր, որ այդ տաք ջրերը տղամարդու ոյժն ու զօրութիւնը կը վերադարձնեն իրան և ինքն էլ ուրիշ տղամարդկանց պէս կդառնայ։ Թէպէտ ամեն օր Սողանլուխից Տփխիսի բաղանիքը գնալիս, — նրա հետ գնուում էր և զօրքեր, — մինը այրական ոյժ ձեռք բերելու, միւսները մարդիկ կուտարելու, թալան հաւաքելու և գերիներ ժողովելու, — բայց Աղա-Մահմադ խանի տղամարդ դառնալու յոյսերը փուստ գուրս եկան և էլի մնաց նա այն այլանդակ գաղանը, ինչ որ և առաջ էր Խանը իմանալով որ Տփխիսումը թագաւորական բաղանիք կայ, գնաց նայելու։ Տեսնելով որ ամուր սալ քարերով և մարմարիօնով են շինուած աւագանները շատ հաւանեց այդ բոլորը։ Նա շատ մեծ ցանկութեամբ և բաւականութեամբ էր լողանում այդ հանքային տաք ջրերում և սպասում էր, որ իր հիւանդութիւնից վերջապէս կը բժշկուի և տեսնելով վերջը որ ոչ մի օգնութիւն չի ստանում, հրամայեց քարու քանդ անել և այդ բաղանիքն էլ։

Այդ ներքինին Վրաստանի վերայ արշաւելուց և գիշեալուրապէս Տփխիս բաղաքը և նորա շրջակայքը աւերակ գարձնելուց, բայցի 10 հազար գերիներ վերցնելուց, — մի այդքան էլ, եթէ ոչ գորա կրկնապատիկ թւից աւելին սպանուած ու կոտորած՝ ծեր տղամարդկանց և կանանց

ու Երեխաների գիտակներն էին տարածուած մնում գետնի երեսին, աւելակների արանքներում և ամենուրեք առանց գետնի մէջը թաղուելու, որոնք օրերով, շարաթներով և ամիսներով մնալով բացոդեայ՝ նեխուում, փիտում և հոտում էին և մեծ տարածութեան վերայ՝ օդը, մթնուրդը—վիչացնում, ապականում և թունաւորում, որից և զանազան հիւանդութիւններ և ժանտախտ ցաւը առաջ բերին և որը մի քանի տարի շարունակուեց եւ այդպէս՝ գաղաճացած մարդկանց ձեռքով կոտորածներ առաջացածների վերայ,—աւելանում էր և ժանտախտից հարուած ստացած քաղցածների, ոյժից ընկածների, ակորչիվախների, թշուառ ու անօդնականների թիւը կրկնապատկվում և քառապատկվում: Իրակլի թագաւորը 7 արու զաւակ ունէր և այդքան էլ աղջիկ: Եօթը տղերանցից առաջինը՝ Գիօրգին ուրիշ մօրից էր. իսկ մնացեալը Դարիայ թագուհուց: Դոքա միմեանց ատում. էին և միմեանց դէմ խարդավանակներ սարքում, ձգտում միմեանց վնասել, միմեանց տապալել: Դոցա անունները ըստ աւագութեան այս է՝ 1) Գիօրգի—(որ Իրակլուց յետոյ թագաւոր դարձաւ և որը նրա առաջին կնկանից էր ծնուած) 2) Իւլօն, որը թագուհի Դարիայի Անդրանիկ որդին էր. 3) Վահատանդ. 4) Անտօն, որը վերջը վրաց կաթողիկոս դառձաւ. 5) Միհրան, որը Ռուսաց ծառայութեան մէջ գեներալ-Լէյտենանտ դարձաւ. 6) Ալէքսանդրը, որ Իրակլու մահից և Գիօրգու թագաւոր դառնալուց յետոյ—ամբողջովին հեռացել էր վրաստանից և միացել պարսիկների և լեռնականների հետ ընդ դէմ Ռուսների տիրապետութեան Վրաստանի վերայ: Նա ամուսնացել էր Երևանցի յայտնի Աղամալեանների—հայ ընտանիքի—Մարիամ աղջկայ հետ, որից և ունեցել էր մի ազու զաւակ՝ Իրակլի անունով: Այս Իրակլու տները գտնուում է Տիխիսի Սօլոլակի փողոցի վերայ և երբ մեր քաղաքումը խօսք է լինուում թէ Իրակլու տների կէսը այս

ինչ մարդը գնեց, կամ նրա տան կէսն էլ այս ինչ մարդու մօտ է զրաւ... պէտք է հասկանալ՝ որ Ալէքսանդր արքայազնի որդի Իրակլու մասին է խօսքը և ոչ Իրակլի Աթաւուրի մասին: 7) Փարնաւողը:

Ալէքսանդր արքայազն վախճանուել է Թէյրանում և թաղուած է հայոց եկեղեցու գաւթում, իսկ նորա ամուսին Աղամալեանց Մարիամ գուստը թաղուած է վանքի եկեղեցու հիւսիսային պատի տակը: Աւելորդ չէ այս տեղ յիշատակել և այն մասին, որ երբ Ալէքսանդր այքայազի ամուսին Մարիամը, որը իր բարձր արժանաւորութեանց համար մեծ յարգանք էր վայելում իւրեան շրջապատող տարրեր կրօն ունեցողներից,—վախճանւեց և հարց եղաւ նորա թաղման տեղը որոշելու:

Ուուս կառավարութիւնը ցանկացաւ որպէս թագաւորազնի ամուսին վայել պատուով և յարգանքով թաղումը կատարել: Կառավարութիւնը ցանկացաւ որ նորան թաղեն հայոց վանքի—աւագ եկեղեցու մէջը՝ Բայց ըստ հայոց սովորութեան չէր կարելի եկեղեցու մէջը թաղել: Այդ ժամանակը Գէորգ կաթողիկոսն էր: Նա այնպէս բան արաւ, որ համ Ուուս կառավարութիւնը գոհ մնաց, համ էլ տիկնոջ մարմինը թաղուեցաւ եկեղեցու մէջը—բայց միայն եկեղեցու պատի տակ: Կաթողիկոսը հրամայեց, որ վանքի եկեղեցւոյ միջից հիւսիսային պատի տակը քանդեն և լայն տեղ թողնեն դսպազը տեղաւորուելու: Դագաղը եկեղեցում դրած էր, պատարագը վերջանալուց յետոյ, —առանց եկեղեցուց դուրս բերելու, ուղղակի իջեցուցին փորած տեղը, որը փոսի մէջ գնալով տեղաւորուեցաւ ուղղակի պատի տակը: ապա չորս կողմն էլ քար ու կրով շրջապատեցին և պատի վրայ արձանը գրուեցաւ մեռնողի ով լինելը:

Ուսերէն զրած է Պարենա Մարիա Իսաակօնա.

Грузинская և аյлн ինչ որ և հայերէնն է) Մարիամ ևսահակեան Մելիք-Աղամալեան—ամուսին արքայազն Աղեք-

սանդրի, որդւոյ Հերակլ արքայի վրաց, ծնեալ ի 12 օգոստոսի 1808 ամի և վախճանեալ 7-ն հոկտեմբ. 1882 ամի:

Իրակլու 7-ը աղջիկների անունները ես այստեղ տւելորդ եմ համարում յիշատակել, ցանկացողը կարող է կարդալ՝ Հ. Դյուրովին-ի „Զակավազիե“ օտե 1803—1806 րությունայ, թէ վրաց ո՞ր իշխանական տունը խնամութեան կապով էր կապուած վրաց թագաւորական տան հետ:

Իրակլի Ա-ի որդի Գիօրգուն ծառանդութիւնը ընկաւ Իրակլի թագաւորի անդամների մէջ անհամայնութիւններ և երկպառակութիւններ էին առաջացել այն բանից, որ իրակլու երկրորդ կին՝ թագուհի Դարեան Մինգրիլիայի Գիօրգու իշխանի դուստրը՝ ձգտում էր իւր «Իւլօն» որդուն թագաւորի յաջորդ նշանակել տար — մի կողմը թողնելով — իրակլու առաջին կնոջից — թագուհի Մարիամից ծնած Գիօրգուն, որը օրէնքով իսկական թագաժառանդը և յաջորդը պէտք է լինէր որպէս իրակլու Ա-ի առաջին և անդրանիկ որդի:

1792 թուին Դարիայ(Դարեջան) թագուհուն յաջողուեցաւ համոզել թագաւոր Իրակլուն, որ իրա որդիկերանցը նիւթական կողմից ապահովացնէ, որոյ հիման վերայ նոցանից իւրաքանչիւրը, որպէս սեփականութիւն, պէտք է ստանար միշմի հազար ընտանիք. իսկ Գիօրգին իւր զաւակներով (որոնց թիւը 16 էր, այսինքն 9-ը արու զաւակ և 7 աղջկերք) պէտք է միայն 4 հազար ընտանիք ստանար: Վրաց ժամանակիրների կարծիքով ժողովուրդի այդ տեսակ բաժանումը գլխաւոր պատճառը դառձաւ եղբայրների մէջ երկպառակութիւն ծագելու և վրաց թագաւորական տան անկմանը նպաստելու:

Բացի սրանից՝ 1794 թուին թագուհի Դարիան, որը իր ամուսին Իրակլու զառամութեան պատճառով համարեաինքն էր կառավարում թագաւորական բոլոր գործերը և իւր խարդաւանանքների շնորհիւ նոր յաջողութիւն ևս ու-

նեցաւ. այն է՝ ստիպել էր իր ամուսին իրակլուն և սորաստորագրութեամբ համաձայնութիւն ստացել, որ գոնէ Գիօրգու մահից յետոյ, թագաւորի յաջորդը լինի, ոչ թէ Գիօրգու որդին, այլ իւր որդիկերանցից նախ՝ «Իւլօնը», ապա ըստ տւագութեան միւսները: Թագաւոր Իրակլին միանգամայն հասկանում էր այդ անկանոնութիւնը և գորավուանդը լինելը — Վրաստանում ընդունած թագաժառանդութեան կութեան կանոնագրութիւնից շեղուելուց բայց ոյժ չունէր հակառակուելու՝ թէ իւր թագուհու պնդումներին և թէ նորա աղքականների և կողմնակիցների աշխատութեանց գէմը:

Թագաժառանդ Գիօրգին երիտասարդութեան ժամանակ հերոսական քաջութեամբ էր յայտնի, մանաւանդ եւ լւան քաղաքի մօտ, որտեղ զօրքերի հրամանատար լինելով օգնեց հօրը՝ Իրակլուն, փառաւոր յախտութիւն անեւ լու. բայց ուրիշ յատկութիւն նրա մէջ չէր երկում և կարծես, նա աւելի պատրաստում էր հոգեոր կոչում ստանալու, քանի թէ թագաւորելու Զափազանց Աստուածամէր և անտարբեր դէպի աշխարհային գործերը բնորոշում էին նրան շատ վաղ ժամանակից: Հոգեորականութիւնը նրան պաշտում էր շատ և այդ ստիպում էր զիմագիր կուսակցութեան վախենալու, չը լինի թէ Գիօրգին օգտուի հոգեորականութեան միջոցով մենող թագաւորին ջնջել տայ, գահը ժամանակելու ստորագրած իրաւագիրը: Այդ պատճառով էլ դեռ իրակլու կենդանութեան ժամանակ վճռեցին հեռացնեն նրան թելաւից բարեայել պատրուակի տակ:

Թիֆլիս քաղաքը Աղա-Մահմադ խանի աւերելուց և ժամանակախոտ լինելուց յետոյ, առիթ էր տուել Գիօրգու հակառակորդներին թագաւոր Իրակլուն համոզել, որ քաղաքը (Տիֆլիսը) պահանջում է որ հակող լինի վրան և թէ բացի Գիօրգուց ոչ ոք չի կարող կատարել այդ յանձնարարու-

Թիւնը՝ իրակլին կանչեց որդուն և ուղարկեց նորան վրաստանի մայրաքաղաքը:

Թագաւորագնը հասկացաւ իրան հեռացնելու պատճառը՝ բայց անպայման հպատակուեց հօր իրամաններին և նա ինքը միայն որ իրան օգնականներ տան, առանց որոնց ինքը անկարող է որեկիցէ բան անել: Նա իրան օգնականներ նշանակեց ըստ մեծի մասին այն տեսակ անձանց, որոնք իրան հաւատարիմ էին և որպէսզի իրանից անեն կասկած հեռացնի ընտրեց նոյնպէս և նրանցից, որոնց ճանաչում էր որպէս իրան հակառակ կուսակցութեանը պատկանող:*)

Հակառակորդները մասսամբ հասկանում էին Գիօրգու դիտաւորութիւնը, բայց Դիօրգուն Թելաւից հեռացնելը համարում էին աւելի հարկաւոր և այդ պատճառով չէին հակառակում նորա ընտրութեանը: Թագաւորագն Գիօրգին իւր ընտրած թիկնապահիներով հասաւ Թիֆլիզ, որը այդ ժամանակը ներկայացնում էր՝ քարերի, մոխիրի և այրած դիակների կոյտեր և միայն ժամատախալց և քաղցածութիւնից մեռնողների հառաչանքները և տնքոցները խախտում էին ահապին գերեզմանական լուսութիւնը: Գիօրգին իջևանեց քաղաքի այն մասումն, որը Հաւլաբար էր կոչում: Նա հրամայեց նաւեր շինել—գետի միւս եղերի հաղորդակցութիւն ունենալու համար, որովհետեւ միակ կամուրջը պարսիկները այրել էին:

Այդ միակ կամուրջը պէտք է որ «Մեջիալի կամուրջ» կոչուածը լինէր, ոչ թէ դորա մօտ եղած նադինենց կոչուած կամուրջը, որը ուշ ժամանակներում է շինուած:

*) Գիօրգու կուսակիցներն էին՝ իշխան Իւան Օբրեկան, եղիազար Պալաւանդով, Ալեքսանդր Մակաշվելով և ք. Ելմտերի Զուրաբով, Դիմագիր կուսակիցներից՝ իշխան Իւան Բաղրամիոս, իշխան Բեհբուրով և Տփխիսի Մելիք Կայն...

Սշխատանքները բաւականին յաջող էին զնում: Քաղաքը սկսում էր փոքր առ փոքր վերաշնուռել և մի տեսակ ձև ստանալ: Գիօրգին ինքը Թիֆլիզում մնալով ուղարկեց իւր որդի Դաւիթին՝ վիրագարձնել և իւրեանց հին տեղերում բնակեցնել՝ Ղազախի, Շամշադինի և Ռորչալուի ցեղերին, որոնք փախել էին զանազան կողմեր Պարսիկների արշաւանքի ժամանակ և այդ տեղերի բնակիչները պատկանում էին Գիօրգուն: Որպէս թագաժառանգին:

Ժողովրդի սպանացող սովը ստիպեց Գիօրգուն հոգս տանել ուրիշ տեղից ցորեն մացնել Թիֆլիզ և այդ բերում էին Ղարսի պաշայութիւնից, իսկ կենսակական պաշարեղենները բերում էին Քարթալինայից և Կախէթի այն տեղերից, որ տեղ որ պարսիկները կամ բոլորովին չէին հասել կամ քիչ էին վնասել: Այսուամենայնիւ Գիօրգին կարձ ժամանակ մնաց Տփխիսում: Նա գնաց Սալա-Օղի թուրքաց գիւղը Ղազախի աղալաբրների մօտ: Աղալաբրները յիշելով և յարդելով թագաւորագնի քաջութիւնները ընդունեցին նորան բարեյօժարութեամբ, իսկ Գիօրգին աշխատում էր ամեն կերպ պահպանել նոցա հետ բարի յարաբերութիւն:

Թելաւ քաղաքում Գիօրգուն հաւատարիմ մնացած անձնաքնը հաղորդում էին նորան թելաւի պալատում պատահած աշմենափոքը անց ու դարձի մասին եղած տեղեկութիւնները և թագաւորագնի սուրհանդակը զանազան բարեայել պատճանների դիմակի տակ անդադար գնում-զալիս էին: Այս տեսակ մի սուրհանդակի միջոցով լուր հասաւ և իրակուվախճանուելու մասին: Գիօրգին հրամայեց բերել խաչը և սուրբ աւետարանը և հրաւիրեց իւր հետ Թելաւից եկած բարձրաստիճան անձանց: Նոքա եկան: Երկշուսութիւնը և տարակուսութիւնը երևում էր նոցա դէմքերի վերայ: Զինեալ աղալաբրների ամբոխը շրջապատել էր ժողովուածների մեծատարած շրջանը: Թագաւորագնը սկսեց այսպէս խօսել՝ ոիմ ծնողս Աստուծոյ կամքով վախճանուեց: Ես մեծ

որդին եմ, թագաւորութեան ժառանգը՝ Ով որ կամենում է, թող ինձ հաւատարմութեան հպատակութիւն յայտնի. համբուրի խաչը և աւետարանը, ով չի ցանկանում, ազատ է իւր ընտրութեան մէջ։

Գիօրգու կողմնակիցները և հակառակորդները նայեցին միմեանց վերայ և նայեցին նոյնպէս իւրեանց շրջապատած զինուած աղալարների վերայ։ Իշխան Խվան-Բագրատիօն Մուխրանսկին առաջինն էր, որը մօտէցաւ խաչը համբուրելու, նորան յետեկցին և միւսները։

— Կեցցէ թագաւոր Գիօրգին, աղաղակեցին հազարաւոր ձայները միասին։



Գիօրգի XII
վրաց վերջին թագաւորը



Մարիամ
վրաց վերջին թագուհի

Բոլոր ներկայ և գոյնների կողմից հպատակութիւնը կատարուեցաւ միաձայն։ Բորչալուեցիները նոյնպէս շուտով և առանց դժուարութեան հպատակուեցին Գիօրգուն։ Հենց սկզբից Գիօրգին ցանկանում էր իր ձեռքը գցել եղբայր թագաւորակն Ալեքսանդրին, որը իւր հօր իրակլու վերջին օրերին, բոլորովին դուրս էր եկել նորա հնագանդութիւնից

և լուրեր էր տարածում, որ կը գրաւի Թիֆլիզը և Քարթալինայի թագաւոր կը դառնայ։

Ալեքսանդրը միջոց ունեցաւ հեռանալ Դուշետ քաղաքը. իսկ Գիօրգին դնաց Գօրի և այստեղ հպատակութեան բերեց իշխաններին և ժողովրդին։

Այն ինչ, մնացեալ թագաւորագուննեցը և արքայագուստները իրակլու որդիքը, բացի Ալեքսանդրից ժողովուեցան թէլաւ քաղաքում թագուհի Գարիայի մօտ։

Մալա-Օզուի մէջ մեծամեծների և ժողովրդի հպատակութեան մասին երգում տալը ամենին յայտնի էր գարձել։ Թագուհու զօրեղ կուսակցութիւնը չը դիտէր ինչ անելիքը և ժամանակը անց էր կացնում խորհրդակցութիւններ անելով։ Խոստովանուելով որ իւրեանց գործը և ենթագրութիւնները վերջնականապէս կորցրած են, այրիացեալ թագուհու համախորհները մտածում էին այն մասին, թէ արդէօք չի կարելի որ և իցէ օգուտներ քաղել կորցրած գործերից։

Այսպիսով սարսափելի ատելութիւն և խարդաւանքներ ծագեցան Գիօրգու իւր զաւակներով և այլեցեալ թագուհին Գարիայի ու իւր զաւակներով խմբերի մէջ։ Մի և նոյն ժամանակ սակայն երկրի և նորա բնակչած դրութիւնը այդ ժամանակը շատ աղէտաբէր և անյուսալի էր։ Նարելի է հաստատապէս ասել, որ իրակլու վերջին տարիների ընթացքում, վրաց թագաւորութիւնը — միայն անունով գոյութիւն ունէր, որովհետեւ նորա մէջ չը կարուչ մի իշխանութիւն, ոչ մի կարգ և կառավարչական ոչ մի կամոնաւոր գործոն զութիւն։ Պարսկական արշաւանքը աւերել էր երկիրը և զութիւն։ Պարսկական մեծագոյն մասից։ Ազա Մահմադ զրկել էր բնակչութեան մեծագոյն մասից։ Մեր դրացի պարսկական զրում էր Գիօրգին 1798 թվին, — «մեզ այսպէս ցըիւ աւեցին սացեալ տարիներում, որ մինչև այժմս էլ մեր հպատակները աղքատացած են և մենք միմեանց չենք

կարողանում՝ գտնել»։ Ժանտախտը և սովլ *) ամբողջ երկրում կատաղի էր և բազմաթիւ զոհեր էր անում։ Տաճիկները Ախալցխայից և լեզգիները Դաղստանից աւազա կային խմբեր էին ուղարկում Վրաստան աւարառութեան և գերիներ բոնելու համար։ Ախալցխայի, Էնդիրիի և Անապալի բազարները (հրապարակները) լեցուած էին Վրաստանից բերուած գերիներով։ Նոյն իսկ իրակին, դեռ վաղուց ցանկանալով լեզգիների արշաւանքներից վրաստանը ապահովել, — պարտաւորուել էր Աւարի Օմար խանին — իբր նուէրի ձեռվ տարեկան 5000 մանէթ վճար տալ **): Բայց այդ վճարն էլ բոլորովին արգելք չէր լինում աւա-

*) 1796 թուին սովի տարին ցորենիցինը այնքան էր բարձրացել, որ մի փութը 5 բուրլիով էր ծախտում

**) Աւարի այդ Օմար-խանն էր և դորա ձիաւոր խմբերն էին որոնք ամբողջ 20—30 տարի Կարթալինայի և Կախեթի բնակիչներին հակալ-հակալ էին զցել և զարի-զարի բերել։ Մէկ էլ կը տեսմէր օրը ցերեկով ֆհքրիկ հոտաղները գիւղի ապրանքը արածացնելու ժամանակ հեռու-հեռու տեղում մի ինչ-որ թողև փոշի է վերըլում։ Փորձից խկոյն կիմանային որ լեզգիների ձիաւոր խմբերն են, որ արշաւում են գիւղի վրայ։ Խոկոյն հաւար կը ըղաւէին, հայ, եկան « լեկի-մով իդայ, լեկի մով իդայ.. » լեզգին եկաւ. տաւարը կը փախցնէին անտառի մէջ, իրանք էլ կը փախչէին թագնուել։ Խոկ իրանք լեզգիները փոթորկի պէս կը յարձակուէին գիւղի վրայ, ինչ-որ ձեռաց կը պատահէր, այնքան թալան չէ, որովհետև զատ չը կար թալանելու, այլ ջահէլ աղջրկերք և պատահներ, ձեռք ձգելով փախցնում էին որ վաճառեն վերոյիշեալ բազաքներում։ Խոկ պատահած ծեր մարդկանց և կանանց վիրաւորում էին և կամ սպանում։ Քարթիլի շատ տեղերում և մեծ գիւղերի մօտ այդ ժամանակներից առաջ կային աշտարակներ (կոչկայ) շինած, որոնք ծառայում էին կարճ ժամանակով մէջը պատսպարուելու համար։ Լեռնականներն էլ փոթորկի պէս յանկարծ յարձակում էին և ինչ-որ ձեռքներն էր ընկնում, վերցնում տանում էին և երկար չէին մնում որևէ տեղ։

զակային խմբերին արշաւել երկրի զանազան կողմերում և ամեն տարի 200 մինչև 300 ընտանիք գերի տանել։ Իրակլին և նորանից յետոյ Գեօրգին չէին կարողանում, կամ շատ կարելի է, չէին համարձակվում պատժի ենթարկել յափշտակիչներին։ Իրակլին աւելի վատ բաներ յառաջ գալուց էր վախենում։ (Երեկի այդ ժամանակներից է առաջ եկել այն թիւրքեր էն առած, որը ասում՝ Ալլահ բեթարինան սախլասուն։ „Աստած աւելի վատից ազատի“)։ Խոկ Գիօրգին երկնչելով իւր ապստամբ եղբորներից — իւր անձի պահպանութեան համար 7000 լեզգիներին ոռափիկ էր տալիս և պահում. միևնոյն ժամանակ ականջի տակովն էր անցկացնում նոցա կատարած անկարգութիւնները, որ գործում էին նոքա նոյն իսկ Տփխիս քաղաքի մէջ։ (Հաւաքար և Կուկիայ թաղերից գերիներ էին բոնում ժողովրդի կանանցը և փախցնում)։ Երկիրը ամայեացաւ և վայրենացաւ։ Բնակիչները կառավարութիւնից պաշտպանութիւն չը գտնելով և միւս կողմից՝ թուրքերի, լեզգիների յափշտակութիւններից, ապա և նոյն իսկ իւրեանց կնեագներից (իշխաններից) ծանր հարկեր տալուց խուսափելու համար թողնում էին հայրենիքը և մերձակայ երկրներումը ապահովութեան տեղեր վնարում։ Մինչև 1783 թիւր վրաստանում հաշւում էր 61,000 ընտանիք. Խոկ 1801 թուին Ռուսաստանին միանալուց յետոյ նոցա թիւր միայն 35,000 ընտանիք էր։ Շատ դժուար է ասել, թէ ով էր աւելի աւերում երկիրը՝ իրանք, — թէ ծտարականները։ Թագաւորական եկամուտները չէր բաւականանում թագաւորական ահազին ընտանիքների պէտքերին բաւականութիւն տալու։ (Իրակլի Ա-ը ունէր 7 արուզաւակ և 7-ը աղջիկ. Գիօրգին ունէր՝ 9 արուզաւակ և 7 աղջիկ, — ընդ ամենը 30 հոգի. Խոկ դոցա թուները...)։ Իրակլին անսահման իշխանութեան տէր լինելով, — միայն խլում էր իւր երկրի իշխանների և ազնուականների հայրենական անշարժ կալուած-

ները և տալիս էր իւր որդկերանց։ Բնակչութեան թւի պակասելու համեմատ—իւրեանց բնակած տեղում մնացած գիւղացիների զրութիւնը անտանելի էր դառնում, որովհետեւ—նոցա վերայ էր ընկնում իւրեանց ոյժից վեր վճարելիք հարկը։ Մանաւանդ աւելի էին տանջւում թագաւորական հողերի վերայ բնակութիւն ունեցող գիւղացիները։ Թագաւորի իւրաքանչիւր որդին, թագաւորի իւրաքանչիւր կինը, ամէն մի ազգականը կարսդ էր իրանից մի բար թ (հրաման) տալ, որով վաճառականներից և գիւղացիներից խլում էր այն ամէնը, ինչ որ թանգազին էր նոցա համար և թագաւորական իշխանութիւնը, հիմքից խախտուած լինելով, հազիւ թէ կարողանում էր նկատել։ Այդ տեսակ բոնաբարութիւնները և աւելի սակաւ էր պատահում, որ միջոցներ ձեռք առնեին այդ բոնութիւնները արդելելու և ջնջելու։ Թագաւորի որդկեցանց կամայականութիւնը տխուր կերպով ազգեցութիւն ունեցաւ թագաւորական գործերի վերայ պարսկական յարձակման ժամանակ 1795 թուին։ Թագուհի Դարիայի որդկերանցից շատերը հոգալով միմիայն իւրեանց կալուածների եկամուտների մասին, զանազան պատճառաբանութիւններ յառաջ բերելով հրաժարուեցին՝ թէ մարդկանցով և թէ փողով օգնութիւն հասցնել իւրեանց հայր իրակլուն և թագաւոր իրակլին էլ հազիւ կարողացաւ 3000 մարդկերանցով դիմագրութիւն ցոյց տալ Աղա-Մահմադ խանի բազմաթիւ գործերին։ *)

*) „Միայն շատին յայտնի է Թիֆլիսում։ որ Սայեաթ-Նովէն լսելով Աղա-Մամէդ-խանի հեծելազօրի Վրաստանու սահմանին մօտենալն, միտոն է բերում իր զաւակներուն (ունեցել է երկու տղայ՝ Մելքիսէդ, Օհան ու երկու աղջիկ՝ Սառա և Մարիամ) ու գալիս է Թիֆլիզ։ Էստեղաց ուղարկում է նրանց Մոզգոկ, ուր սրանք կցում են հաստատ բնակութիւնն։ Սաւեաթ-Նովէն գնում իր զաւակներուն ճանապարհ թէ չէ, Պարսիկն մանում են Թիֆ-

Թիօրգին յաթոռ նստաւ 49 տարեկւն հասակում։ իւր երիտասարդութեան ժամանակ բազմական հոգւով էր վառած և առանձնապէո իւր վերայ էր ուշը գրաւել իրակլու—երեանի վերայ գնացած պատերազմի ժամանակ։ Բայց տարիքը աւելանալով աւելի ծանրացել և բթացել էր՝ թէ մարմնով և թէ հոգւով և միանգամայն անձնատուր էր էղել իւր հակումներին, այն է՝ կեանքի դիտողութեանը և հոգեսր անձանցը։ Վրաց վիճակաղիրը փառաբանում է նուրա կրօնասիրութիւնը, այրիներին և որբերին հոգանաւորութիւնը ցոյց տալը և կառավարական գործերի մէջ անշահասիրութիւն ունենալը։ Բայց այդ բոլոր յատկութիւնները բաւական չէին լինում Վրաստանը փրկելու համար։ Եթէ թագաւորութիւնը գեռ կանգուն էր մնացել, եթէ տաճիկները, պարսիկները և լեզգիները չէին բաժան-բաժան արել իւրեանց մէջ այդ թագաւորութիւնը, — դորա պատճառը Վրաստանի մէջը չը պէտք է փնտուել, այլ հեռու չիւսիսում։ Եւ թէ Պարսկաստանը, և թէ Տաճկաստանը շատ լաւ գիտէին, որ նոքա ստիպուած պէտք է լինէին գործ ունենալ ոչ թէ միայն Թիօրգու հետ, այլ և Ռուսաց կառավարութեան հետ՝ այն ինչ Ռուսաց Պատել-

լիգ։ Հազարատու առաջնորդաբանն էնց բերդի տակն ըլելով՝ թը նամիքն տուն են ընկում եկեղեցու գաւիթն ու կցում են կողոպտելն ու կողոպտեն։ Սայեաթ-Նովէն վրայ են հասնում եկեղեցում աղօթք անելիս։ Սրանից պահանջում են գուս գալն ու հաւատն ուրանալն, բայց կրօնաւորն Պարսից թրերու տակն աւանցում է հոգին՝ ասելով՝ «Զ լի մանամ ք լիսադան, դին մանամ իսագան»։

Եկեղեցուց չեմ գուս գտի, չեմ ուրանալ Յիսուսին։ Էսպէս խալիսի նօքաբան նահատակվում է որպէս ծառայ Աստուծոյ սեպտեմբեր ամսին 1795-ին։

Մէ քանի օրից՝ Պարսիկ Թիֆլիզէն գուս գնալուց յիսոյ, վեր են առնում նրա մարմինն ու թաղում են Մեծ բերդի եկեղեցի



Պատէլ Ռուսաց հնքնակալ.

ինքնակալը դեռ չէր շտապում Գիօրգուն վրաց թագաւորի յաջորդ ընդունել և իրական օգնութիւն հասցնել Վ. բաստանին, որը որ արդէն խոստացուած էր դեռ 1783 թուին—Գիօրգինսկ քաղաքում կնքուած դաշինքով։ Թագաւոր Գիօրգին Պետերբուրգ ուղարկած իւր նուիրակ—Գերսեվան ձաւձավածէի միջնորդութեամբ աղաչում էր,

հիւսիսային փոքր դրան առջևն; Թէպէտ Սայեաթ-Նովու գերեզմանն չ'ունի քար պած, բայց էսպէս պատմում են նրա թաղման պատահողներն։

Սայեաթ-Նովայ,

Գուսանք:

Լուս զցած աշխատասերութէնով Գէորգեայ Ախվերդեան։
Մոսկվա, ՚ի տպարանի Վլադիմիր Գոտիկ—1852։

որ Ռուս կառավարութիւնը շուտով զօրքեր ուղարկէ, ընդունէ իրան թագաւորական տիտղոսով և նորա որդի Դաւթին էլ ճանաչէ թաղաժառանգ։ Պետերբուրգում, ըստ երկոյթին, ճիշդ տեղեկութիւն չունեին Վրաստանի գործերի վերաբերութեամբ և այդ պատճառով Գիօրգուն հոնվանաւորութիւն ցոյց տալը կապում էին այն բանի հետ, թէ Գիօրգին—որքան հաւատարմութիւն ցոյց կը տայ Ռուսաց կառավարութեանը և ի՞նչ դիրք կը բռնի առ Պարսից կառավարութեանը։ Իսկ իրապէս Գիօրգու դրութիւնը այնպէս էր. որ ստիպուած էր կամ իւր ազատ կամքով հրաժարուել թագաւորութիւնից, կամ թէ անձնատուր լինել նորան, որը աւելի օգնութիւն կը հասցնի վրաց գահին։

«Զեզ համար անյայտ չէ վրաց առածը,—գրում էր թագաւորազն Դաւթիթը իշխան ձաւձավածէին փետր. Յ-ից 1799 թուին. որ ամեն բան իւր ժամանակին պէտք է գործ գնուի,—իսկ միւս ժամանակներում ուշադրութեան էլ արժանի չի լինի»։ Մեր թագաւորութեանը համապատասխան չեն այն տեսակ գործերը, որոնք վէճերով են զբաղեցնում։ 1798 թուին Պարսից Բարա-խանը *) Գիօրգի թագաւորին առաջարկեց իւր հովանաւորութիւնը, խոստանալով նորան մինոյն ժամանակը տալ ներիի, նիրվանի, Գանջու և Երևանի խանութիւնների կառավարութիւնը։ Այդ առաջարկութիւնը այն տեսակ ձևով էր արուած, որ Գիօրգին չէր կարող ուղիղ պատասխան տալուց խուսափել, եթէ չէր ցանկանում պարսկական յարձակման բոլոր սարսափները նորից կրել։ Գիօրգու հրամանով թագաւորազն Դաւթիթը գրեց իշխան Գերսեան ձաւձավածէին յուսահատական մի նամակ, որը, վերջապէս, բաց արաւ Պետերբուրգի պաշտօնական աշքը վրաս-

*) Բարա-խանը յայտնի է նոյնպէս՝ Ֆետ-Ալի-Շահի անունով

տանի իսկական գրութեան մասին և 23 փետրւարի 1799 թուի հրովարտակով, Պատել ինքնակալը հրամայեց կողկասեան գծի հրամանատար գեներալ-մայօր իշխան Ռւբակովին, որ պատրաստէ Եգերեան գունդը Վրաստան գնալու համար։ Միևնոյն ժամանակ — համաձայն 1783 թը վի գաշնագրութեան, — Յըդ յօդուածի, — կայսրը Գիօրգուն հաստատեց վրաց թագաւորական յաջորդ և նորա որդի Դաւիթին Էլ ընդունեց գահի ժառանգ։ 1799 թուի ապրիլի 18-ին թագաւորական հաստատման հրովարտակը և թագաւորական նշանները Գիօրգուն հասցնելու համար նշանակուել էր — համաձայն 1783 թ. Գիօրգինել քաշուում Խուսաց և վրաց մէջ կնքուած գաշնագրի հիման վերայ — քաղաքական խորհրդական Պետր Իվանիչ Կավալենսկուն, որը միշտ պէտք է մնար վրաց արքունիքում, որպէս Խուսատանի լիազօր հաւատարմատար նախարար։

Այդպէս վերջապէս իրականացաւ Գիօրգու վաղեմի ցանկութիւնը։ 1799 թուի յուլիսի վերջերում Կավալենսկին հասաւ Նավուրի կայարանը Կովկասեան գծի վերայ, որտեղ բնակութիւն ունէր Կովկասեան գիլիդիայի զինւորական հրամանատար գեներալ լէյտենանտ Կնորինդը, որը փոխարինել էր Ուրակովին նոյն տարւայ մարտ տիմին։ Կովկանակու Վրաստան ճանապարհորդելու շարունակութեանը արգելք էր եղել պէտի Վրաստան տանող Կովկասեան լեռների ճանապարհների անբաւարար լինելը։ Գիօրգի թագաւորը եռանդուն միջոցներ ձեռք տուաւ ճանապարհները կարգաւորելու և հոկտեմբերի 12-ին այդ ճանապարհը արդէն պատրաստ էր ամբողջ տարածութեան վերայ սկսեալ Մօղգոկից մինչև Տփիփիս։ 13-ը հոկտեմբերի գեներալ մայօր Լազարել, Եգերեան պօլկի շէֆը, Կնորինդից հրաման ստացաւ Թերեկ գետը ամսի 20-ին անցնելու և պէտի վրաստան ուղղուելու։ Լազարեին հրամայուած էր, որ Տփիփիս հաս-

նելուն պէս Գիօրգի թագաւորին ցոյց տայ զինւորական այն բոլոր պատիւները, ինչ որ ըստ օրինի վայել էր կայսերաց։ Պօլկի (զօրագունդի) հետ գալիս էր նոյնպէս և վրաց արքունիքում լիազօրութիւն ունեցող քաղաքական խորհրդական կավալենսկին։ Հոկտեմբերի 20-ին որ մոայլ աշուն էր, գեն. մ. Լազարել ճանապարհ ընկաւ Եգերեան, — այժմ էէիր-Երևանեան նորին Մեծութեան պօլկի հետ ունենալով և փոքր թւով կօգակների վաշտ, նոյնպէս գեներալ մայօր Գելիկիսի և հատ գաշտային թնդանօթ իւր ոմբաձիգ բաւակէօնով։ Բացի այդ բերում էր իւր հետ և բաւականին մեծ պաշտ ուտեստի և ոազմամթերքի։ Ճանապարհը մի կերպ յարմարեցրած լինելով սայլերի անցնելու համար, այսուամենայնիւ Դարբալեան մոայլ ձորից սայլերը հազիւ — հազ կարողանում էին բարձրանալ և ապա Կովկասեան գլխաւոր լեռան գագաթը սարսափելի զարիվայրներով անցնել։ Ժայռերի գուրս ցցուած տեղերից գէպի ցած անցնելու համար, զինւորները առաջ ցած էին գցում իւրեանց վերարկուները և ապա ինքիեանք թռչելով ընկնում էին նոցա վերայ. իսկ սայլերը և թնդանօթները թոկերով էին իջեցնում. Ժայռերը միմեանց վերայ բարձրանալով, կարծես կախլնկած լինէին ահապին գուրս ցցուածքներով, որոնց տակով պէտք է մարդիքը անցնէին, երբ միհնոյն ժամանակ ձիւնն էր թափվում։ Պօլկը անցնում էր այդ տեսակ տեղերով նոյնեմբեր ամսին, երբ լեռներում սաստիկ ցուրտ էր տիրում և անդադար ու անսպասելի կերպով բուքեր էին բարձրանում։ Սպաները և զինւորները պարտաւորուած էին ընտելանալ Կովկասեան բնութեան արհաւերքների բոլոր խստաշունչ մեծութեանը։ Ճանապարհին ուշանալու պատճառով զօրագնդի ուտելէղէն պաշարը հատել էր և Լազարել ստիպուած էր պաշարեղէն գնելու, քանի որ վրաց իշխանութիւնը հոգս չէր տարել այդ մասին։

Ապա որ մի քանի անգամ խստութեամբ պահանջելուց յետոյ թագաւորազն Վախտանգը վերջապէս ուղարկել էր եկող զօրքի համար, որը լեռներից արդէն իջել էր Արագւայ գետի հովիտը—13 բեռներով չուրեքներ (բոքոն հաց) և 80 զոյտ եղներ և իւրաքանչիւր իջեանում 50 ական ձիաներ:

Տիփսիսում այդ ժամանակը կենդանութիւն էր տիրում: 1799 թուի նոյեմբերի 20 հազարաւոր ժողովուրդ արեգակի ծագելուց շատ առաջ — Հաւաքարի կամուրջը անցնելով՝ քաղաքին մօտիկ եղած կուկիայ գիւղն էր թափուել, որպէս զի յանդիպի եկող ուսւ զօրապետին, որը այդ օրը Մցխեթից պէտք է դուրս գար: Հանդէսը աւելի շուք էր ստացել և նրանով, որ այդ օրը թագաւորի անուանակոչութեան օրն էր և թագաւորը ինքը ցանկացել էր անձամբ դիմաւորել զօրքին քաղաքից դուրս և ձիով դուրս էր գնացել իւր հետ ունենալով թագաւորանզին, թագաւորագուներին և բազմաթիւ թիկնապահներին: Ամենի հայեացքն էր ուղղուած դէպի Մցխեթը տանող մեծ ճանապարհը, որ տեղից պէտք է երեար եկող զօրքը: Այդ ճանապարհը, որ հէնց Մցխեթի մօտ անցնում էր Արագւայ գետը (այժմ այդպէս չէ) ուղղուում էր այն ժամանակը Կուր գետի ձախ կողմով—Աւալայի, Դիգուբէի և Առկիայի վրայով: Այժմ Կուկիայ գիւղը այլ ևս չը կայ, նորա տեղը այժմս Տիփսիս քաղաքի Միքայելեան, Ելիսարէթեան և Նիկոլայեվեան փողոցներն են: Օքն պարզ և արեգակային էր. բայց փչում էր սաստիկ և բաւականին ցուրտ քամին, որը նշան էր ցուրտ աշունքի սկսուելուն: Եւ ահա, թմրուկները (բարաբանները) թնդացին և մօտիկ սարերի ետեից—սուխններով զինուած յանկարծ յառաջ էր ընդհանում կարգաւորեալ խումբը, որը յիշեցնում էր, կարծես թէ քարէ պատ էր շարժւում: Այդ եղերեան զօրագունդն էր, որը պատերազմներում փորձուած իւր շէֆ (առաջսորդ)

գեներալ-մայօր Իվան-Պետրովիչ Լազարևի հրամանատարութեամբ յառաջ էր քայլում: Բատալիօնները տօնական շորեր հազած, ծանր եռանկիւնածեւ գլխարկները գլխներին և հասարակ կանաչ հպաւստներով աւելի քան' թէ համեստ տեսք ունէին և թէ շատ որոշ կերպով զանազանուում էին վրացիներից, որոնք արեգակի տակ գայլում էին իւրեանց արծաթեայ և բազմագոյն մետաքսեայ տօնական հագուստներով: Այդ բատալիօնների գլխներից վերև մինչև անգամ չէր ծածանում զրօշակները,—զօրքի սովորական անբաժան ընկերը,—որովհետեւ եղերները չունէին զրօշակներ, քանի որ նոքա նշանակուած էին պատերազմում բացաւապէս ցրուած կոռուելու: Այսուամենայնիւ այդ շարժուն կենդանի պատը.—շաղկապուած հզօր կարգապահութեամբ,—զգացնել էր տալիս այն հուժկու ոյժը, որի առաջ պէտք է խորտակուեր արևելեան ժողովուրդների բոլոր ճիղը: Այդ բանը զգում էին ամենեքեան թէ ժողովուրդը և թէ թագաւորը: Երբ բատալիօնները կանգ տուան և երկար զիծ կազմելով ձգուեցին երկարութեամբ և ինչպէս Կավալերնուկին ասում է՝ ահ ու վախ ազդող զիրք տուան,—այն ժամանակը թագաւորը և նորա հետ նորա բոլոր թիկնապահները ձիաների վերայ հէծած յառաջ ընթացան զօրագնդին դիմաւորելու: Թմբուկները ածեցին գնալու քայլուածքը (Մարտъ) և ուռսական ուրբանացման յորձանք առաջացրեց—ուղղած առ թագաւորն: Այս վայրկեանին որպէս պատասխան այդ նորհաւորական ձայնին Թփիսիսի եկեղեցիների զանդակները զօդանշեցին և Մետեխի—Տփիսիսի հին բերդից թնդամնօթները սկսեցին արձակել: Ժողովուրդն էլ այդ վայրկեանին չը կարողանալով իւր ուրախութեան բուռն զգացմունքը զսպել իւր մէջ, կենդանի հոսանքի նման շրջապատեց եղերներին (զօրքին), խախտեց զօրքի շարքերը և եղբայրական համբոյրներով սկսեց նորհաւորել եկողներին:

Զանդակների զօղանջիւնի հետ և թոնդանօթների թընագիւնների ուղեկցութեամբ—թագաւորը զօրքի առջեկցը գնալով անցաւ Չուղուրեթը, Հաւլաբարը, (Ցիխիսի այժմեան թաղերն են) և Մետեսի ամբոյը և Հաւլաբարի կամուրջով (Մէշէտի կամուրջը) անցնելով—ներքեի բերդի միջով,—գնաց ուղիղ թագաւորական հրապարակը (Այժմը էկզարիսի հրապարակ):

